ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# 2011-2012
# ՈՒՍՏԱՐՎԱ
# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին ............5
Ուսումնամեթոդական վարչություն ............105
Մինչհամալսարանական կրթության վարչություն ............109
Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն ............111
Միջազգային համագործակցության վարչություն ............116
Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն ............126
Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն ............133
Արհեստակցական կազմակերպություն ............136
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարան ............139
Պատմության թանգարան ............143
Որակի ապահովման կենտրոն ............144
Շրջանավարտների և կարիերայի կենտրոն ............146
Մշակույթի կենտրոն ............150
Գիտակազմակերպական բաժին ............154
Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին ............156
Ուսանողական կառույցներ ............157
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ ............171
Աստվածաբանության ֆակուլտետ ............193
Արևելագիտության ֆակուլտետ ............200
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ ............212
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ ............220
Իրավագիտության ֆակուլտետ ............233
Կենսաբանության ֆակուլտետ ............253
Հայ բանասիրության ֆակուլտետ ............300
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ ............320
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ ............343
Պատմության ֆակուլտետ ............358
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ ............382
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ ............400
Ռուս բանասիրության ֆակուլտետ ............439
Սոցիոլոգիայի ֆակուլտետ ............454
Տնտեսագիտության ֆակուլտետ ............467
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ ............484
Քիմիայի ֆակուլտետ ............508
Ֆիզիկայի ֆակուլտետ ............537
Համահամալսարանական ամբիոններ ............585
Իջևանի մասնաճյուղ ............589
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ ............622
Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն ............645
Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն ............653
Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն ............658
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն ............661
Հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարան ............665
Եգիպտագիտության հայկական կենտրոն ............666
Ակադեմիկոս Ալեքսեյ Սիսակյանի անվան հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն ............668
Միջազգային կրթական կենտրոն ............671
Կիրառական հոգեբանության կենտրոն ............675
Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ ............680
Ռուսական կենտրոն ............682
Հրատարակչություն ............684
Գիտական հանդեսներ ............690
2010-2011 ուստարում ԵՊՀ-ում տեղի ունեցած հիշարժան միջոցառումներն ըստ www.ysu.am-ի լրահոսի ............691

# ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Կենտրոնի ղեկավար՝** *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

## *Կենտրոնի աշխատակիցների կազմը*

1. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող
2. Դավթյան Համլետ Կարապետի, ավագ լաբորանտ

## *Կենտրոնի հիմնական խնդիրները*

- Ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը,
- ստեղծել համապատասխան ծրագրեր, ուսումնական անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ, ինքնուսույցներ «Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» մասնագիտացումների համար,
- պատրաստել հայ վրացագետների կադրեր՝ պետական ապարատում, գիտության, մանկավարժության, դիվանագիտության, թարգմանության և այլ բնագավառներում աշխատելու համար,
- ծրագրել և անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
- ուսումնասիրել, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
- նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների ու նրանց մասնաճյուղերի միջև:

Գիտական աշխատանքները նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչությունների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների, հայ-վրացական գրական-մշակութային կապերի, վրացի և վրացացած հայագետների, հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանության ու հրատարակության պատրաստմանը:

Կենտրոնի աշխատանքերն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտամանկավարժական («Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» խմբերում վրացագիտական առարկաների դասավանդում) և գիտահետազոտական:

## *Կենտրոնի գործունեության ուղղությունները*

Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների արժևորմանը, հայ գրականագիտության արձագանքներին վրաց գրականությանը, և վրաց գրականագիտության արձագանքներին հայ գրականությանը, հայ-վրացական գրական-մշակութային կապերի խնդիրներին:

Արդեն հինգերորդ տարին է՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում առկա են «Վրացագիտություն» մասնագիտացմամբ խմբեր: Պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում և Հայ բանասիրության ֆակուլտետում վաղուց ի վեր գործում են ժամանակակից վրաց լեզվի կամընտրական և մասնագիտական դասընթացներ: 2011-2012 ուստարվանից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդվում է վրաց լեզու: Այդ դասընթացների զգալի մասը հիմնականում վարում են կենտրոնի աշխատակիցները: 2011-2012 ուստարվանից Պատմության ֆակուլտետում սկսել է գործել «Կովկասագիտություն» մասնագիտացմամբ մագիստրատուրան:

## *Կենտրոնը հրատարակության է պատրաստել հետևյալ աշխատանքները.*

1. **Հայերեն-վրացերեն զրուցարան** (երկրորդ լրացված և վերամշակված հրատարակություն, 150 էջ)

Զրուցարանը նախատեսված է բուհերի ուսանողների, Հայաստանի և Վրաստանի հայկական դպրոցներում վրացերեն սովորող աշակերտների, վրացերենի իրենց իմացությունը խորացնել, վրաց լեզուն ինքնուրույն յուրացնել ցանկացողների, ինչպես նաև զբոսաշրջիկների, Վրաստան մեկնողների համար: Առանձնապես կարող է օգտակար լինել վիրահայությանը՝ խոսակցական վրացերենում հմտանալու գործում:

2. **Նիկողայոս Մառ** (Հայ-վրացական հարաբերությունների մասին անցյալում, վերամշակված հրատարակություն, 110 էջ)

Վրացի բանաստեղծ Ակակի Ծերեթելին իր իսկ կողմից հրատարակվող «Ակակիի ժողովածու» («Ակակիիս կրեբուլի») հանդեսում (1898թ., N 5) տպագրում է մի ծավալուն ուսումնասիրություն՝ «Արմենիա, Հայաստան, Սոմխեթի անվանումների պատմական քննություն» վերտառությամբ: Պատասխան հոդվածով հանդես է գալիս ականավոր լեզվաբան Նիկողայոս Մառը: Մառի հոդվածը թարգմանում, հրատարակում են Թիֆլիսի հայկական հանդեսները, մասնավորապես՝ «Մուրճը» (1898թ.), «Նոր դարը» (1898թ.):

Կարող է օգտակար լինել հայագետներին և վրացագետներին, հայ-վրաց լեզվամշակութային հարցերով հետաքրքրվող անձանց:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

***Թեմա 1.*** Վրաց նորագույն գրականությունը 1900-1960-ական թթ. (կատարող՝ Հր. Բայրամյան):

Վերջին տարիներին պատրաստվել և հրատարակվել է «Վրաց գրականությունը V-XIX դդ.» աշխատությունը (Գիրք Ա): Գրականության թեման շարունակական է և կարևոր: Ըստ այդմ՝ հաշվետու ուստարում ձեռնարկվել է վրաց նորագույն գրականության առաջին շրջափուլի, այն է՝ XX դարի սկզբից մինչև 60-ական թվականների և հայ-վրացական մշակութային փոխհարաբերությունների պատմության շարադրանքը: Գրքում վրաց դասական գրողներին մենագրական գլուխներ են հատկացվելու, անդրադարձ է լինելու նրանց իսկ երկերի մասին հայ քննադատական մտքի գնահատականներին. այդպիսի մոտեցումն աշխատությունը դարձնում է ավելի բովանդակալից, ինչը հետաքրքիր է դառնում նաև վրացի ընթերցողի համար:

***Թեմա 2.*** Հայ-վրացական առնչությունները VII-XII դարերում (կատարող՝ Հ. Դավթյան):

Ուսումնասիրության նյութն ընդգրկում է երկու ժողովուրդների պատմության նշանակալից իրադարձություններով լի մի ժամանակաշրջան:

Շուրջ հինգ դար ներառող պատմական այդ ժամանակահատվածը թեև բեկումնային է երկու ժողովուրդների կենսագրության համար, սակայն ընդհանուր գծերով է ներկայացված ինչպես հայ, այնպես էլ վրաց պատմագրության մեջ: Ուսումնասիրության նպատակն է առավել համակարգված և հանգամանալից ներկայացնել նախ՝ VII-VIII, ապա՝ IX-X, երրորդ փուլում՝ XI-XII դարերում կատարված իրադարձությունները Մեծ Հայքում և Վիրքում, փորձել ցույց տալ դրանց միջև եղած կապերն ու միմյանցով պայմանավորված լինելը, փոխազդեցությունները:

***Թեմա 3.*** Ժամանակակից վրաց լեզվի շարահյուսություն (կատարող՝ Ջ. Թամարյան):

Հետազոտությունն ունի տեսական և գործնական նշանակություն ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների համար: Աշխատանքը հանձնված է մասնագիտական կարծիքի և խմբագրման:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 6 | - |

## Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Հոդված


1. *Բայրամյան Հ. Ս.,* Բանաստեղծի 60 գարունները (անվանի սերբագետ Բ. Սիմոնյանի ծննդյան 60-ամյակի առթիվ), «Ազգ» օրաթերթ, N 63, Երևան, 7 ապրիլի, 2012, էջ 6:
2. *Դավթյան Հ. Կ.,* Վերականգնել հայ քաղկեդոնական (ուղղափառ) եկեղեցին Հայաստանում, «Առավոտ» օրաթերթ, N 124, Երևան, 2011, էջ 14:
3. *Դավթյան Հ. Կ.,* Այսպես կոչված «այսպես կոչվածի» մասին (վրաց պատմաբանների կեղծարարությունների մասին), «Ազգ» օրաթերթ, N 178, Երևան, 2011, էջ 4:
4. *Դավթյան Հ. Կ.,* Թե ինչու հնարավոր եղավ Մեծ Հայքի բաժանումը 387 թվականին, «Կրոն և հասարակություն» հանդես, թիվ 16, Երևան, 2011, էջ 9-36:
5. *Դավթյան Հ. Կ.,* Վիրքի քրիստոնեացումը հայկական դարձերես, 2012, www.religions.am.
6. *Давтян Г. К.,* О так называемом так называемом, газета “Голос Армении”, N 128, Ереван, 2011, с. 5.


## ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավար՝** *Հովհաննիսյան Մհեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

## Բաժնի աշխատակիցների կազմը

1. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
2. Հակոբյան Լիլիթ Վարդանի, ավագ լաբորանտ
3. Մուրադյան Լիլիթ Վարդանի, ավագ լաբորանտ
4. Չափարյան Արևիկ Վարուժանի, ավագ լաբորանտ
5. Սեդրակյան Նինա Հաբեթի, ավագ լաբորանտ

## Բաժնի հիմնական խնդիրները

21-րդ դարում հայագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական և տեղեկատվական շտեմարանների դերը հետզհետե ստանձնում է համացանցը՝ ինտերնետը, որի առաջադրած խնդիրները հայագիտության համար նոր մարտահրավերներ կարելի է համարել: Բաժնի առջև ծառացած խնդիրներից են համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրների դիտարկումը, անհրաժեշտ հայագիտական գրականության թվայնացումը, համապատասխան կայքերի պատրաստումն ու համացանցում անհրաժեշտ նյութերի տարածման ապահովումը:

### *Բաժնի գործունեության ուղղությունները*

Բաժինն իրականացնում է համացանցում զետեղված հայագիտական, հակահայագիտական նյութերի վերհանումը, մշտադիտարկումը, համակարգումը, հասցեագրումը համապատասխան մասնագետներին, հայագիտական անհրաժեշտ գրականության թվայնացումը, կայքերի և այլ համացանցային ռեսուրսների պատրաստումը և սպասարկումը, ինչպես նաև ՀՀԻ-ի հետ ԶԼՄ-ների ու հասարակայնության կապերը:

### *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

- Հաշվետու ուստարում բաժինը թվայնացրել և պատրաստել է 160 հայագիտական ուսումնասիրություն՝ ՀՀԻ-ի կայքերում տեղադրելու նպատակով:
- Հիշյալ ժամանակահատվածում բաժինը նախագծել, պատրաստել և արդեն շահագործում է հայագիտական ուղղվածության հետևյալ կայքերը.
  - www.armenianarchaeology.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու հնագիտության թեմայով, մասնավորապես Հայաստանի հնագիտությանն առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.armeniaculture.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու մշակութային թեմայով, մասնավորապես հայկական մշակույթին առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.armeniandiaspora.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու հայկական սփյուռքին առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.historyofarmenia.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու հայոց պատմությանն առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.armenianlanguage.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու հայոց լեզվին և գրականությանն առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.armeniansgenocide.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու Հայոց ցեղասպանությանն առնչվող գիտական բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:
  - www.armenianreligion.am: Կայքը կոչված է համացանցային օգտատերերին ներկայացնելու կրոնի թեմայով, մասնավորապես քրիստոնեության, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությանն ու գործունեությանն առնչվող գիտական, գիտահանրամատչելի բովանդակությամբ ուսումնասիրություններ, ընթացիկ նորություններ:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավար՝** *Աղաբաբյան Ալվինա Սամվելի*

### *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Ջամալյան Դավիթ Վրույրի, հոգ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Թերզյան Արամ Տիգրանի, կրտսեր գիտաշխատող

3. Միրաքյան Վահրամ Գևորգի, կրտսեր գիտաշխատող

## *Բաժնի հիմնական խնդիրները*

Ներկայիս աշխարհաքաղաքական, էթնոհոգեբանական, տեղեկատվական-քարոզչական և գիտակրթական գործընթացներն առաջ են բերում մի շարք հիմնախնդիրներ, որոնք առավել քան հրատապ են և առանձնահատուկ լուծում են պահանջում: Աշխարհում ընթացող ռազմաքաղաքական տեղաշարժերը, էներգակիր ռեսուրսների համար կատաղի պայքարը, տեղեկատվական-հոգեբանական պատերազմները նորանոր մարտահրավերներ են նետում էթնիկ հանրույթներին և պետություններին, որոնց անտեսումը կամ համարժեք հակադարձման հետաձգումը կարող են կործանարար լինել վերջիններիս կենսագործունեության համար: Նմանօրինակ մարտահրավերների առաջ են կանգնած նաև Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Այս պայմաններում, հատկապես ազգային անվտանգության տեսակետից, կարևորագույն խնդիր են դառնում աշխարհում և հատկապես տարածաշրջանի մեզ սահմանակից երկրներում ծավալվող աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական, տեղեկատվական-հոգեբանական, էթնոհոգեբանական և էներգետիկ քաղաքականության ոլորտներում տեղի ունեցող գործընթացների լիարժեք տիրապետումը, համակողմանի վերլուծությունը և զարգացման հնարավոր միտումների նախանշումը, ներքին և արտաքին ինֆորմացիոն հոսքերի վերլուծությունը, բացահայտ և քողարկված ինֆոգեն վտանգների, հակահայկական ինֆորմացիոն-հոգեբանական-քարոզչական միջոցառումների բացահայտումը, սոցիալական դիրքորոշման ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը և լրատվամիջոցներում մանիպուլյացիոն ազդեցության հնարքների բացահայտումն ու չեզոքացումը և ՀՀ ազգային անվտանգության համար սպառնալիք հանդիսացող մի շարք այլ հարցեր:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում կան առանձին խմբեր, անհատներ, որոնք այս կամ այն չափով զբաղվում են վերոնշյալ խնդիրներով, սակայն դրանք հիմնականում որևէ նեղ ոլորտին վերաբերող մասնակի ուսումնասիրություններ են՝ հաճախ զուրկ որևէ գիտական հիմքից: Բացի դրանից՝ շատ խնդիրներ, որոնք փոխկապակցված են և պահանջում են համալիր մոտեցում և հիմնավոր գիտական հետազոտություն, հաճախ ուսումնասիրվում են առանձին-առանձին, ոչ բավարար խորությամբ, առանց գիտական մեթոդիկայի, կրում են զուտ մոնիթորինգային բնույթ, ինչի արդյունքում կատարված ուսումնասիրությունը, չունենալով անհրաժեշտ գիտական հիմնավորում, էապես կորցնում է իր որակն ու կիրառական նշանակությունը:

Ռազմավարական հետազոտությունների բաժինը հանրապետության այն եզակի կառույցներից է, որ ամենայն խորությամբ և բացառապես գիտական հիմքի վրա ոչ միայն ուսումնասիրություններ է կատարում ազգային, էներգետիկ և տեղեկատվական անվտանգության տեսակետից ռազմավարական նշանակություն ունեցող վերոնշյալ խնդիրների վերաբերյալ, այլև նախանշում է դրանց հետագա հնարավոր զարգացումները, մշակում է այդ հիմնախնդիրների լուծման տարբերակներ և այդ տարբերակների կիրառման ուղիներ:

## *Բաժնի գործունեության ուղղությունները*

Բաժնի գործունեության առանցքում գիտահետազոտական աշխատանքների իրականացումն է ազգային անվտանգության համար ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք ուղղություններով՝

1) տեղեկատվական անվտանգությանը վերաբերող ուսումնասիրություններ՝
   - ներքին և արտաքին միջավայրում հակահայկական քարոզչության հիմնական ուղղությունների և թեզերի գիտական վերլուծություն, հակափաստարկում և հակաքարոզչության կազմակերպում,
   - թուրքական և ադրբեջանական բացահայտ և քողարկված քարոզչական թեզերի դուրս բերում և հակազդման համալիր միջոցառումների ծրագրի մշակում,
   - տեղեկատվական ներքին հոսքերի մշտադիտարկում և վերլուծություն,
   - ինֆոգեն վտանգների բացահայտում և դրանց դեմ պայքարի մեթոդոլոգիայի մշակում,

• հակահայկական և ոչ հայանպաստ տերմինաբանության ուսումնասիրություն և ազգային-պետական շահերից բխող եզրույթների մշակում և այլն,

2) տեղեկատվական-հոգեբանական անվտանգությանը վերաբերող ուսումնասիրություններ՝

• հասարակության և հատկապես երիտասարդների շրջանում տարբեր խնդիրների և կառույցների նկատմամբ սոցիալական դիրքորոշումների ձևավորման աղբյուրները, մեխանիզմները և տարածման ճանապարհները,

• ազգային անվտանգության տեսակետից արատավոր դիրքորոշումների տարածման ճանապարհները և հակազդման մեխանիզմները և այլն,

3) ռազմական, ռազմաքաղաքական անվտանգությանը և տարածաշրջանային էթնոքաղաքական հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝

• հայ հանրության շրջանում բանակի դրական կերպարի ձևավորման և ամրապնդման մեխանիզմների մշակում,

• էթնոքաղաքական գործընթացները տարածաշրջանում, հատկապես՝ Ադրբեջանում և Վրաստանում,

• Հարավային Կովկասի չճանաչված պետությունների տեղն ու դերը մեր տարածաշրջանում,

• Թուրքիայի քաղաքական ակտիվությունը մեր տարածաշրջանում, նեոօսմանիզմի գաղափարախոսության արդի դրսևորումները և այլն,

4) Հայաստանի վրա ԵՄ տարածաշրջանային էներգետիկ քաղաքականության առկա և հնարավոր ազդեցության հետ կապված հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝

• ԵՄ էներգետիկ անվտանգության համատեքստում Հարավային Կովկասի տեղի, դերի, նշանակության պարզաբանումն ու տարածաշրջանի և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ ԵՄ մոտեցումների վերհանումը,

• ԵՄ-Ադրբեջան էներգետիկ փոխգործակցության արդյունքների, հեռանկարների և դրանց տարածաշրջանային անդրադարձների ուսումնասիրությունը,

• Հայաստանի ապամեկուսացման և տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա ԵՄ տարածաշրջանային քաղաքականության հնարավոր արդյունքների հետազոտությունը և այլն:

Բաժնի գործունեության ուղղություններից են նաև՝

- կատարված հետազոտությունների շրջանակներում համագործակցությունը ինչպես լրատվամիջոցների, այնպես էլ համապատասխան պետական և այլ կառույցների հետ՝ հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները լայնորեն կիրառելի դարձնելու և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ համատեղ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով,
- գործնական կապերի հաստատումը հանրապետությունից դուրս գտնվող համանման կենտրոնների և անհատ հետազոտողների հետ՝ փորձի փոխանակման և համատեղ ծրագրեր իրականացնելու համար,
- պետական տարբեր կառույցների հետ համատեղ բաց դասընթացների, գիտաժողովների և նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպում՝ ընդհանուր տեղեկացվածությունն ապահովելու և դաշտում հետազոտություններն ավելի ընդլայնելու համար,
- պրակտիկայի կազմակերպման միջոցով հետազոտական աշխատանքներում ԵՊՀ ժուռնալիստիկայի, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և հոգեբանության, աստվածաբանության, պատմության, միջազգային հարաբերությունների ֆակուլտետների լավագույն ուսանողների ներգրավում՝ այդ կերպ կազմակերպելով ոլորտում որակյալ կադրերի խիստ պակասը լրացնելու գործընթացը:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրություններ են կատարվել տեղեկատվական ներքին հոսքերի մշտադիտարկման և վերլուծության ուղղությամբ: Մասնավորապես ուսումնասիրության առարկա են հանդիսացել հայաստանյան ԶԼՄ-ների միջոցով հակասոցիալական, ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորման և հասարակության վրա դրանց բացասական հետևանքների հետ կապված խնդիրները: Կատարված աշխատանքների արդյունքում հրատարակվել է բաժնի աշխատակից Վ. Միրաքյանի ««Ագրեսիվ հեռուստատեսության» հետևանքները» աշխատությունը, որտեղ ներկայացված են հեռուստատեսության դերն ագրեսիայի, հակասոցիալական վարքի ձևավորման գործում, ագրեսիայի կրկնօրինակման միջոցով ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորումը, ինչպես նաև հեռուստատեսային ագրեսիայի բացասական հետևանքների թուլացման կամ չեզոքացման հնարավոր միջոցները:

Տեղեկատվական ներքին հոսքերի ուսումնասիրության և տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հետ կապված խնդիրների շրջանակներում բաժնի աշխատակիցները հետազոտություններ են կատարել նաև հայկական բանակի վերաբերյալ հայաստանյան ԶԼՄ-ների տեղեկատվական քաղաքականության քննության և վերլուծության ուղղությամբ: Խնդրի հետազոտությունը, որը դեռ ընթացքի մեջ է, պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ 2010-2011 թթ-ից սկսած մեդիադաշտում նկատվում է հայկական բանակի վերաբերյալ քննադատությունների սրացում, ինչը երբեմն ստանում է ծայրահեղ դրսևորումներ՝ հակաբանակային ատելության քարոզի տեսքով: Եվ քանի որ ներկայումս Հայաստանը հարևանների հետ ներքաշված է մի շարք ակտիվ և պասիվ հակամարտությունների մեջ, հայկական բանակի վերաբերյալ մեդիաքաղաքականության արդյունքում դրական կամ բացասական սոցիալական դիրքորոշումների ձևավորումը կարող է լուրջ ազդեցություն ունենալ պատերազմական իրավիճակում գտնվող երկրի անվտանգության կազմակերպման գործի վրա: Բանակի նկատմամբ հասարակության անվստահությունը կարող է հիմք հանդիսանալ հայ-ադրբեջանական/թուրքական հակամարտությունում Հայաստանի դիրքերի թուլացմանը, հետևաբար՝ զիջումների ռազմաքաղաքական հարթակում:

Բաժնում աշխատանքներ են տարվում նաև թուրքական և ադրբեջանական բացահայտ ու քողարկված քարոզչական թեզերի դուրս բերման, վերլուծության և հակազդման եղանակների մշակման, ինչպես և հակահայկական և ոչ հայանպաստ տերմինաբանության ուսումնասիրության և ազգային-պետական շահերից բխող եզրույթների մշակման ուղղությամբ: Ընթացքի մեջ են նաև Հայաստանի վրա Եվրամիության տարածաշրջանային էներգետիկ քաղաքականության առկա և հնարավոր ազդեցության հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը, մասնավորապես Հայաստանի ապամեկուսացման և տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա ԵՄ տարածաշրջանային քաղաքականության հնարավոր արդյունքների հետազոտությունը:

Առանձնակի հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից կազմակերպվել և 2012թ. հունիսի 4-ին ԵՊՀ-ում անցկացվել է «Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում» խորագրով հանրապետական գիտաժողովը: Պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայումս մեր իրականության մեջ տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների հետազոտման կարիք կա, գիտաժողովը միտված էր նշված ոլորտի հիմնախնդիրների ու զարգացումների վերհանմանը և այդ համատեքստում Հայաստանի անվտանգության կազմակերպմանն առնչվող մեր ապագա անելիքների և գործողությունների անդրադարձին: Գիտաժողովին մասնակցել են ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի, Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանների ներկայացուցիչները: Աշխատանքներ են կատարվել գիտաժողովի զեկույցների ժողովածուի հրատարակման ուղղությամբ:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | - | 1 | - |

## Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Մենագրություն

1. *Միրաքյան Վ. Գ.*, «Ագրեսիվ հեռուստատեսության» հետևանքները, «Լուսակն» հրատ., Երևան, 2012, 92 էջ:

### Հոդված

1. Միրաքյան Վ. Գ., Հայաստանն օտար և տեղական ռադիոազդեցության համատեքստում, «21-րդ ԴԱՐ», N 3, Երևան, 2012, էջ 101-110:

## ՀԱՅ-ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավար՝** *Սահակյան Լուսինե Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

### Բաժնի աշխատակիցների կազմը

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

### Բաժնի հիմնական խնդիրները

Բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական, լեզվական քաղաքականությունը, քննել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում): Կենտրոնում դաշտային աշխատանքների միջոցով ուսումնասիրվում են Թուրքիայի Ռիզե նահանգի կազմում գտնվող պատմական հայոց Համշեն գավառի տեղանուններն ու ժողովրդագրությունը, բռնի իսլամացված համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված հայերեն բառերը, ինչպես նաև ինքնության խնդիրները: Կենտրոնի խնդիրներից են նաև այս հարցերի վերաբերյալ թուրքական պատմագրության կեղծարարության բացահայտումն ու հակադարձումը:

### Բաժնի գործունեության ուղղությունները

- Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն:
- Զիյա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական հայացքների քննություն:

- Դաշտային աշխատանքների հիման վրա Համշենի միկրոտեղանունների իմաստա-կառուցվածքային քննություն:
- Հայատառ-ղփչաղերեն ձեռագրի լեզվական քննություն:
- Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում:
- Օսմանյան աշխարհագիր մատյանների, տարեգրքերի և հայկական ու օտար աղբյուրների համադրությամբ հայկական նահանգների ժողովրդագրական շարժերի ուսումնասիրություն:
- Թուրք պատմագրության կեղծարարության բացահայտում և հակադարձում:
- Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

Հաշվետու ուստարում կենտրոնում համակողմանի ուսումնասիրվել են թյուրքականության ամենանշանավոր գաղափարախոս Զիյա Գյոքալփի քաղաքական, մշակութային և տնտեսագիտական հայացքները: Աղբյուրագիտական քննության են ենթարկվել Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները», «Թյուրքական քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատությունները, օսմանական տարբեր հանդեսներում հրատարակված սոցիոլոգիական, մանկավարժական, լեզվաբանական բնույթի հոդվածները, բանաստեղծությունները:

Գյոքալփագիտական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվել են Ալեքսանդր Սաֆարյանի հայերեն և անգլերեն հոդվածաշարում, «Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները» (2012թ.) մենագրությունում և «Տնտեսական թյուրքականությունը, էտատիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թյուրքացումը»» ուսումնամեթոդական ձեռնարկում (2012թ.):

Լեզվաբանական քննության են ենթարկվել Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում պահվող հայատառ ղփչաղերեն ձեռագրերը: Առաջին անգամ նկարագրվել է 1634թ. գրիչ Ավետիքի (N 3522) ձեռագրում տեղ գտած «Քերականություն ղփչաղաց» հայատառ ղփչաղերեն հատվածը (էջ 226-353), որի մասին համապա-տասխան զեկուցումներ են ներկայացվել ԵՊՀ-ում հայ-ղազախական և Աստանայի Լ. Ն. Գումիլյովի անվան ազգային համալսարանում կայացած միջազգային թյուրքագիտական գիտաժողովներում:

## *Հրատարակություններ*

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 3 | - | - | 1 | |

## *Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ*

### Մենագրություն

1. *Սահակյան Լ. Ս.,* Համշենի մանրատեղանունները (հայերեն, թուրքերեն, ռուսերեն), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 175 էջ:
2. *Սաֆարյան Ալ. Վ.,* Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 300 էջ:
3. *Դադրյան Վ. Ն.,* Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, (Անգլերենից թարգմանությունը՝ Անուշ Բեժանյանի, հայերեն թարգմանության խմբագիր՝ Լուսինե Սահակյան), ԵՊՀ հրատ, Երևան, 2012, 30 էջ:

Յոդված

1. *Sahakyan L. S.,* Hayde gidelum Hemşin'e, Hemşin Yeğnovit-Elevit yerleşim biriminin tarihi ve bu yer isminin etimolojisi, Haziran N 6, Demokrat Haber, İstanbul, 2012, 6-7 s.

## ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավարի պաշտոնակատար՝** *Մանուկյան Ժակ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

### *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Ազլյան Վահագն Ռոբերտի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հովհաննիսյան Լիլյա Հայկազի, կրտսեր գիտաշխատող
4. Սարգսյան Վարդուհի Ֆելիքսի, կրտսեր գիտաշխատող
5. Բաբայան Հասմիկ Մամիկոնի, լաբորանտ

### *Բաժնի հիմնական խնդիրները*

Բաժինը զբաղվում է հայ ինքնության, մշակույթի պահպանման և զարգացման հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

### *Բաժնի գործունեության ուղղությունները*

- Հայ ինքնության ձևավորմանը նպաստող գործոններ,
- Սփյուռքում ազգային ինքնության պահպանման խնդիրը,
- Կրթությունը որպես մշակութային անվտանգության ապահովման միջոց,
- Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արևմտյան Հայաստանում և Նախիջևանում հայկական մշակութային արժեքների ոչնչացման պետական քաղաքականությունը և դրա հետևանքները:

### *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

Հաշվետու ուստարում բաժնում կատարվել են արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության թեմային առնչվող գիտական հոդվածների սրբագրում, արխիվային ձեռագիր տեքստերի համակարգչային մշակում, հայագիտական աշխատանքների վերաբերյալ նյութերի թարգմանություններ:

Ժ. Մանուկյանը մասնակցել է ՀՀ ԿԳՆ-ի կողմից կազմակերպված «Հայագիտական համահայկական օլիմպիադայի» հայոց պատմության առարկայի հանձնաժողովի աշխատանքներին:

## *Հրատարակություններ*

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | - | 5 | - |

## *Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ*

### Մենագրություն

1. *Մաղալյան Վ. Ս.,* Երևանի համալսարանի հոբելյանները (1919-2009 թթ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 224 էջ, +14 էջ ներդիր:

### Հոդված

1. *Մանուկյան Ժ. Ս.,* Գրախոս. Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.)» գրքի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2 (118), ՀԱԱ հրատ., Երևան, 2011, էջ 147-152:
2. *Մաղալյան Վ. Ս.,* Ալեքսանդր Մյասնիկյան (ծննդյան 125-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, «Գիտություն» հրատ., Երևան, 2011, էջ 28-50:
3. *Մաղալյան Վ. Ս.,* Հայ գրատպությունը Սամցխեում և Ջավախքում, (1885-1920թթ.), «Էջմիածին» հանդես, Թ, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2012, էջ 60-77:
4. *Մաղալյան Վ. Ս.,* Ժամանակի զարկերակին, գրախոսություն ակադ. Ս. Ա. Համբարձումյանի հրապարակախոսական հոդվածների ժողովածուի մասին, ԲԵՀ, թիվ 2, սերիա 2. Բանասիրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 13-25:
5. *Մաղալյան Վ. Ս.,* Արժեքավոր հայրենագիտական գիրք, գրախոսություն Ռ. Ավետյանի «Իմ ծալկան» գրքի մասին, «Հայաստանի Հանրապետություն», թիվ 95, Երևան, մայիսի 23, 2012, էջ 5:

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավար՝** Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր

### *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Պողոսյան Վարուժան Արամազդի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Մելքոնյան Գևորգ Գագիկի, պատմ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
3. Գևորգյան Սուսաննա Պարույրի, կրտսեր գիտաշխատող
4. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
5. Գալստյան Գայանե, կրտսեր գիտաշխատող
6. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ
7. Վրացյան Մարգարիտ Ալբերտի, ավագ լաբորանտ
8. Դերձյան Վահանդուխտ Վահանի, լաբորանտ

## *Բաժնի հիմնական խնդիրները*

- Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրություն,
